



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 65693 գործարքներ, որոնց քանակը 2008թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 14.2%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 20.6%-ով :

2009թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 17977 օտարման գործարքների 75.9%-ը կազմել են առուվաճառքները, 22.9%-ը՝

նվիրատվությունները և 1.2%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 31.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2009թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, նվազել է 33.4%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 34.9%-ով: 2009թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 4355 առուվաճառքի գործարքների 64.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. առաջին կիսամյակում, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 31.4%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 34.2%-ով:

2009թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2008թ.	առաջին կիսամյակ 2009թ.	երկրորդ կիսամյակ 2008թ.
Կենտրոն	475500	484500	491100
Արաբկիր	401200	361100	405500
Քանաքեռ-Զեյթուն	303000	281200	308400
Նոր-Նորք	267500	240200	273800
Ավան	264800	239900	273000
Էրեբունի	266800	255200	272800
Շենգավիթ	274400	248200	281400
Դավթաշեն	283200	267500	301200
Աջափնյակ	272500	243300	271100
Մալաթիա-Սեբաստիա	260400	230600	260700
Նուբարաշեն	149100	143200	159900
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	292600	272200	299900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2008թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել են 7.0%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել են 9.2%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. առաջին կիսամյակի համեմատ կնվազեն շուրջ 17.7%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 20.6%-ով:

2009թ. առաջին կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1432 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 40.1%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 44.8%-ով:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության

արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2008թ.	առաջին կիսամյակ 2009թ.	երկրորդ կիսամյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	121200	133700	140900
	Ապարան	32300	41200	35900
	Թալին	41800	48000	46300
Արարատ	Արտաշատ	93700	91600	106600
	Մասիս	124300	135200	137000
	Վեդի	77700	87800	83400
	Արարատ	59200	83000	68500
Արմավիր	Վաղարշապատ	159700	170900	174500
	Արմավիր	115100	118300	127300
	Մեծամոր	75400	80000	88400
Գեղարքունիք	Սևան	84600	93900	102400
	Գավառ	44200	50300	50700
	Մարտունի	66200	77900	70800
	Վարդենիս	30400	33500	33100
	Ճամբարակ	15900	18100	16600
Լոռի	Վանաձոր	86400	92800	102000
	Ստեփանավան	45100	53400	48700
	Մալիտակ	60400	70700	63100
	Ալավերդի	29100	33900	32700
	Տաշիր	30100	35400	33100
	Թումանյան	5600	6000	5600
	Շամլուղ	3200	3300	3200
	Ախթալա	12800	13700	13000
Կոտայք	Արվյան	166000	145500	176500
	Նոր Հաճն	119100	134800	137000
	Բյուրեղավան	94300	102200	115400
	Եղվարդ	111800	122200	125800
	Հրազդան	64100	65000	73600
	Ծաղկաձոր	140600	179000	166000
	Չարենցավան	85000	89200	97400
Շիրակ	Գյումրի	92100	107400	115200
	Արթիկ	53300	61500	59100
	Մարալիկ	26400	31100	28500
Սյունիք	Գորիս	98800	121700	113300
	Կապան	84200	107200	101300
	Միսիան	67800	90700	82800
	Մեղրի	45200	54900	48700
	Ագարակ	28700	33200	29900
	Քաջարան	45200	56400	52800
	Դաստակերտ	7000	7700	7000
Վայոց Ձոր	Վայք	72300	76400	80900
	Եղեգնաձոր	92900	109300	103500
	Զերմուկ	122700	125000	137200
Տավուշ	Դիլիջան	85900	97900	103900
	Իջևան	115100	140800	138900

	Բերդ	38000	42900	40300
	Նոյեմբերյան	29800	33700	30800
	Այրում	21100	23100	21100

2009թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 12.3%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել են 1.0%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա հանրապետության մարզերում 2009թ. առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. առաջին կիսամյակի համեմատ կնվազեն շուրջ 0.6%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ շուրջ 13.5%-ով:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1800 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 371, մարզերում միասին վերցրած՝ 1429: 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 34.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 37.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 33.6%-ով:

2009թ. առաջին կիսամյակում, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 40.6%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 45.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 39.3%-ով:

2009թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2008թ	առաջին կիսամյակ 2009թ	երկրորդ կիսամյակ 2008թ
Կենտրոն	488800	509600	506900
Արաբկիր	408600	408900	437300
Քանաքեռ-Զեյթուն	311100	314600	323200
Նորք-Մարաշ	274700	310800	305900
Ավան	270800	278300	287900
Էրեբունի	270700	288400	289000
Շենգավիթ	277700	281000	292300
Դավթաշեն	292000	309400	320000
Աջափնյակ	278300	281900	298600
Սալաթիա-Սեբաստիա	269900	272400	289900
Նուբարաշեն	154500	163600	166700
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	299700	310800	319800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել են 2.8%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 3.7%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում

2009թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ կնվազեն շուրջ 15.0%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատ կնվազեն շուրջ 8.3%-ով:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/			
		առաջին կիսամյակ 2008թ.	առաջին կիսամյակ 2009թ.	երկրորդ կիսամյակ 2008թ.	
Արագածոտն	Աշտարակ	124400	142600	144600	
	Ապարան	35300	43600	38600	
	Թալին	44900	51500	48500	
Արարատ	Արտաշատ	99100	102100	110300	
	Մասիս	127500	144800	140700	
	Վեդի	84000	93500	91500	
	Արարատ	64600	84900	70100	
Արմավիր	Վաղարշապատ	163000	179300	178400	
	Արմավիր	119400	126700	130600	
Գեղարքունիք	Սևան	86900	102900	104700	
	Գավառ	46300	57300	53600	
	Մարտունի	69400	82400	77100	
	Վարդենիս	32500	38900	36400	
	Ճամբարակ	19700	22500	21100	
Լոռի	Վանաձոր	91100	103100	107200	
	Ստեփանավան	50200	57600	53300	
	Սյիտակ	64500	73800	67300	
	Ալավերդի	31500	37500	36600	
	Տաշիր	33500	39400	37200	
	Թումանյան	9500	10400	10300	
	Շամլուղ	6300	7400	7300	
	Ախթալա	15700	17400	16100	
Կոտայք	Աբովյան	171400	169500	191000	
	Նոր Հաճն	124000	145400	141700	
	Բյուրեղավան	97000	115200	118300	
	Եղվարդ	115600	132400	132000	
	Հրազդան	67100	75200	78600	
	Ծաղկաձոր	213900	281400	262100	
Չիրակ	Չարենցավան	87000	97800	100400	
	Գյումրի	96200	119600	117300	
	Արթիկ	56100	65700	62200	
	Մարալիկ	30400	34750	32500	
	Սյունիք	Գորիս	101100	129100	122900
		Կապան	87900	115000	103400
Միսիան		70200	95000	84700	
Մեղրի		48600	58100	51000	
Ագարակ		31400	35800	33100	
Դաստակերտ		10200	10400	10400	
Վայոց Ձոր	Վայք	76700	83400	84100	
	Եղեգնաձոր	98200	116100	107300	
	Ջերմուկ	74600	108200	95700	

Տավուշ	Դիլիջան	90700	112400	114400
	Իջևան	119700	149000	140500
	Բերդ	40200	46200	42000
	Նոյեմբերյան	35200	37400	36200
	Այրում	22800	24900	23000

2009թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 2.9%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 17.5%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա մարզերում 2009թ. կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ կնվազեն շուրջ 10.0%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ կաճեն շուրջ 3.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 6665 միավոր /3952.96 հա/ հողեր, որից Երևանում` 351 միավոր /202.52 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, օտարվել են 144 միավոր /23.74 հա/ հողեր, որից Երևանում` 75 միավոր /10.18 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 3308 միավոր /3351.54 հա/, որից Երևանում` 16 միավոր /2.78 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 2292 միավոր /389.58 հա/, որից Երևանում` 228 միավոր /134.74 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 922 միավոր /90.14 հա/, որից Երևանում` 99 միավոր /30.12 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 86 միավոր /91.27 հա/, որից Երևանում` 8 միավոր /34.88 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 39 միավոր /24.24 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 17 միավոր /5.49 հա/
- անտառային հողեր` 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.70 հա/:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 5824 միավորի /3481.10 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում` 289 միավոր /191.99 հա/, նվիրատվության գործարքներ` 732 միավոր /418.05 հա/, որից Երևանում` 48 միավոր /7.96 հա/ և փոխանակության գործարքներ` 109 միավոր /53.81 հա/, որից Երևանում` 14 միավոր /2.56 հա/:

Հանրապետությունում 2009թ. առաջին կիսամյակում, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 43.4%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 34.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 49.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 44.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում` 743.74 հա, որից 723.83 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 28.0%-ը կամ 1633 գործարքներ /1497.59 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում` 99 միավոր /140.35 հա/, իսկ 70.4%-ը կամ 4100 միավորը /1931.50 հա/ հանդիսացել են

մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 189 միավոր /51.64 հա/: 2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 91 գործարք /52.01 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	1.96	40	120.64	55	17.74	15	2.72	4	32.92	146	11.00	24	5.00
Արագածոտն	107	557.04	1	0.90	4	0.14	31	4.00	235	166.80	0	0.00	136	14.40	5	0.40
Արարատ	28	53.75	7	2.76	71	7.65	58	0.65	378	159.95	9	10.05	262	23.44	16	0.44
Արմավիր	36	98.61	6	3.52	8	0.98	59	3.38	449	509.95	0	0.00	296	28.72	27	5.03
Գեղարքունիք	21	94.33	1	0.02	37	3.13	37	3.90	233	150.86	0	0.00	90	10.18	15	3.23
Լոռի	9	4.21	4	1.09	47	4.30	80	1.51	218	131.10	3	0.43	90	10.96	24	0.74
Կոտայք	112	180.00	25	10.05	165	10.63	112	4.27	434	239.70	2	0.47	345	29.97	34	3.42
Շիրակ	11	36.38	5	1.12	79	27.13	59	2.47	183	174.09	1	0.20	46	6.01	16	0.69
Սյունիք	20	106.71	6	2.23	2	0.07	22	1.32	84	113.82	1	0.85	16	1.53	3	0.87
Վայոց Ձոր	42	62.08	1	21.50	24	1.97	39	0.96	47	20.45	0	0.00	25	2.28	11	0.47
Տավուշ	21	23.91	5	0.99	34	2.07	66	2.40	101	35.81	0	0.00	47	4.67	14	5.85
Ընդամենը	407	1217.02	65	46.14	511	178.71	618	42.60	2377	1705.25	20	44.92	1499	143.16	189	26.14

Ստորև ներկայացվում է 2009թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	81	18.59	4	1.96	32	1.30	45	15.33	18	121.76	0	0.00	0	0.00	8	119.35	10	2.41
Արագածոտն	5	1.87	0	0.00	1	0.01	4	1.86	138	560.20	107	557.04	1	0.90	3	0.12	27	2.14

Արարատ	20	1.22	1	0.94	0	0.00	19	0.28	142	62.06	26	52.23	6	1.82	71	7.65	39	0.36
Արմավիր	10	0.60	0	0.00	1	0.06	9	0.54	88	94.23	25	86.95	6	3.52	7	0.92	50	2.84
Գեղարքունիք	6	0.27	0	0.00	2	0.12	4	0.15	90	101.11	21	94.33	1	0.02	35	3.01	33	3.75
Լոռի	8	0.22	0	0.00	3	0.19	5	0.03	131	10.76	8	4.07	4	1.09	44	4.11	75	1.49
Կոտայք	24	1.26	2	0.11	4	0.76	18	0.39	384	201.39	106	177.69	23	9.95	161	9.87	94	3.88
Շիրակ	32	25.73	2	0.37	14	24.91	16	0.45	122	41.38	11	36.38	3	0.75	65	2.22	43	2.03
Սյունիք	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	49	110.32	20	106.71	6	2.23	2	0.07	21	1.31
Վայոց Ձոր	4	0.19	0	0.00	0	0.00	4	0.19	102	86.31	42	62.08	1	21.50	24	1.96	35	0.77
Տավուշ	25	1.02	3	0.19	10	0.17	12	0.66	101	28.34	21	23.91	2	0.80	24	1.89	54	1.74
Ընդամենը	216	50.97	12	3.57	67	27.52	137	19.88	1365	1417.86	387	1201.39	53	42.58	444	151.17	481	22.72

Հանրապետությունում 2009թ. առաջին կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 20 գործարքներ /15.63 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. առաջին կիսամյակում, 2008թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 61.9%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 76.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 61.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 65.1%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 55.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 65.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 42.4%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	72	82.76	32.2	2407.5	187.9	169	72.28	365.0	12000.0	4153.0
Ապարան	5	18.23	42.1	254.5	123.7	17	12.51	86.5	2727.3	499.6
Թալին	28	455.90	34.0	184.0	94.0	32	55.22	93.6	5494.5	494.3
Ծաղկահովիտ	2	0.15	700.0	7000.0	3850.0	15	25.02	79.5	1000.0	223.4
Արարատի մարզ										
Արտաշատ	10	27.52	69.5	2590.4	699.4	160	56.87	335.1	10833.3	2016.7
Մասիս	12	23.27	59.7	331.0	250.8	68	26.03	200.0	11904.8	2845.7
Վեդի	4	1.44	810.7	3000.0	1807.6	133	65.72	207.0	10795.1	1816.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	7.69	54.9	84.2	64.9	219	169.92	294.3	9090.0	1118.3
Բաղրամյան	6	23.00	33.8	195.0	107.1	42	225.62	90.6	2561.1	644.1
Վաղարշապատ	15	56.25	44.1	774.4	442.2	178	106.94	444.4	11764.7	2515.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						147	66.57	199.8	1875.0	447.2
Ճամբարակ	10	79.10	78.6	989.0	462.5	37	37.72	60.5	953.3	217.7
Մարտունի	1	0.20	2444.0	2444.0	2444.0	9	2.55	51.1	2850.0	543.4
Սևան	9	13.40	44.0	315.0	159.3	23	11.81	52.2	2134.8	216.7
Վարդենիս	1	1.63	55.2	55.2	55.2	17	32.21	41.2	2575.1	362.0

Լոռու մարզ										
Այվերդի						106	43.00	170.4	6424.2	1058.1
Գուգարք	5	2.08	112.7	400.2	367.4	13	6.31	234.6	6065.9	1066.3
Սպիտակ	1	0.90	648.3	648.3	648.3	3	1.76	250.0	5555.5	577.4
Ստեփանավան	2	1.09	728.6	1150.0	939.3	29	25.26	90.6	1686.6	410.5
Տաշիր						66	51.10	45.3	1384.4	215.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	69	87.01	45.8	1329.7	267.6	204	96.48	279.3	11942.7	4817.2
Եղվարդ	31	55.79	74.3	1430.0	395.3	166	77.27	174.4	11971.8	3342.4
Հրազդան	6	34.90	64.4	843.8	267.3	62	65.40	130.5	10256.4	1399.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	15.20	165.0	448.4	259.5	51	47.52	252.0	1693.1	476.2
Ամասիա	6	21.18	39.4	150.6	79.1	11	23.06	40.9	261.0	133.9
Անի						33	36.48	110.6	546.9	286.2
Աշոցք						16	47.47	58.5	215.8	125.4
Արթիկ						72	19.56	79.4	1428.6	212.4
Սյունիքի մարզ										
Գորիս	6	21.07	214.9	1221.0	718.0	20	19.66	92.6	1023.2	435.2
Կապան	13	82.64	230.3	1025.6	374.1	11	11.49	120.0	841.6	262.4
Մեղրի						10	1.36	193.0	3000.0	564.7
Սիսիան	1	3.00	190.0	190.0	190.0	29	25.37	46.3	1977.4	291.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	4.51	34.3	201.3	85.6	25	6.27	125.0	10000.0	1448.8
Վայք	30	57.57	35.4	246.0	94.2	21	13.83	58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ	5	2.04	147.1	519.6	378.5	44	10.27	213.3	3783.8	468.1
Իջևան	16	21.87	49.3	14300.0	3481.0	15	5.64	267.5	9454.5	969.0
Նոյեմբերյան						42	19.91	46.7	7368.4	709.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	1241.8	175.0	3928.6	2630.2	111	99850.0	130.7	22200.0	2572.0
Ապարան						8	8986.0	124.1	609.6	235.8
Թալին						14	26102.0	63.2	1454.8	124.7
Ծաղկահովիտ						2	6760.0	60.0	214.3	75.6
Արարատի մարզ										
Արտաշատ	64	71254.0	144.0	819.7	558.0	65	63721.0	173.9	7140.3	913.7
Մասիս	7	5201.0	558.0	3107.8	1850.1	115	84885.0	187.5	25000.0	1220.6
Վեդի						79	82342.0	126.1	5000.0	672.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2600.0	112.0	425.3	320.8	104	109586.0	131.6	9090.9	1216.9
Բաղրամյան						8	9710.0	100.0	833.3	165.4
Վաղարշապատ	4	6555.0	1004.9	3828.0	2416.5	175	159989.0	197.4	26528.4	1548.6

Գեղարքունիքի մարզ										
Գավառ	10	11838.0	132.0	183.3	157.7	12	11987.0	186.6	1084.3	422.1
Ճամբարակ						9	8339.0	71.3	2286.2	119.9
Մարտունի	13	7284.0	112.6	133.4	114.8	53	63934.0	119.3	5000.0	272.8
Սևան	12	10986.0	372.6	503.4	447.0	10	9880.0	240.0	3110.4	195.3
Վարդենիս						6	7658.0	72.5	987.2	141.3
Լոռու մարզ										
Ալավերդի	2	87.0	609.5	609.5	609.5	30	42877.0	114.3	1388.9	171.2
Գուգարք	9	3419.0	687.1	5331.9	3715.6	28	25917.0	77.9	14083.3	674.4
Սպիտակ	32	37197.0	60.0	123.6	97.2	17	22427.0	104.9	1348.3	165.0
Ստեփանավան	1	400.0	554.5	554.5	554.5	11	12173.0	88.2	1666.7	130.5
Տաշիր						4	6189.0	45.3	400.0	75.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	146	84931.3	271.9	3643.4	2384.6	167	134326.0	264.5	35353.5	2073.6
Եղվարդ	1	39.0	1617.2	1617.2	1617.2	138	122881.0	173.6	27000.0	2544.9
Հրազդան	14	13720.0	126.0	4750.3	951.5	38	41150.0	117.7	34848.5	1352.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	43	11785.5	290.4	5479.5	2671.1	17	19918.0	113.6	18750.0	332.6
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	16	7733.1	88.0	802.7	418.7	13	17215.0	67.9	180.6	110.9
Աշոցք						2	9680.0	40.8	144.0	58.8
Արթիկ	6	2700.0	28.8	554.9	198.4	14	13308.0	111.8	5000.0	214.1
Սյունիքի մարզ										
Գորիս						6	6277.0	112.2	1700.0	273.7
Կապան						3	1909.0	67.9	2638.9	220.5
Մեղրի	2	740.0	350.0	370.0	360.0	5	3030.0	68.5	632.9	138.1
Սիսիան						2	4062.0	123.5	875.0	155.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	24	19650.0	45.4	760.0	226.2	18	16475.0	96.7	7659.6	367.2
Վայք						7	6350.0	120.7	1448.3	141.2
Տավուշի մարզ										
Բերդ						2	325.0	75.8	810.0	92.1
Իջևան	24	18926.5	79.2	2500.0	1586.9	40	40013.0	74.1	14423.1	479.2
Նոյեմբերյան						5	6410.0	125.0	1948.1	158.8

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 78 գործարքներ 25.59 հա մակերեսով, ընդ որում 29-ը՝ /18.74 հա/ Շիրակի, 47-ը՝ Լոռու /6.70 հա/ և 1-ական՝ /0.04 հա/ Արարատի, /0.11 հա/ Կոտայքի մարզերում:

2009թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6902 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 81.7%-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2009թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 15.3%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 17.4%-ով:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 451 բնակարանների, 279 անհատական բնակելի տների, 3006 հասարակական և 416 արտադրական նշանակության օբյեկտների, 2634 միավոր /13508.22 հա/ հողերի, 115 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 234 վարձակալության գործարքների, այդ թվում 45 միավոր /33.94 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 98.3%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 7.3%-ով :

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 13508.22 հա հողերից 60.93 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 13447.29 հա հողերի 235.68 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 8.13 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 3598.52 հա, որից 3351.56 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3979.02 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	4	540.00	88	343.78
Արարատ	14	2731.96	225	518.85
Արմավիր	6	22.27	74	231.88
Գեղարքունիք	3	22.00	347	1753.38
Լոռի	12	104.00	100	597.94
Կոտայք	0	0.00	36	492.57
Շիրակ	1	200.00	357	697.13
Սյունիք	6	358.79	302	2992.78
Վայոց Ձոր	0	0.00	103	1382.68
Տավուշ	0	0.00	28	40.67
Ընդամենը	46	3979.02	1660	9051.66

2009թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5669 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. առաջին կիսամյակում 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 56.0%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 56.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /42.9%/, առանձնատների /22.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.7%/ և հողերի /14.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2574 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 49.2%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 49.6%-ով:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 251 գործարքներ, որից 177՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 75.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 13.1%-ն՝ անհատական բնակելի տների, 6.0%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 2.0%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.2%-ն՝

ամառանոցների, 0.4%-ն՝ ավտոտնակների և 2.0%-ը՝ հողերի նկատմամբ: Գործարքների քանակը 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 72.6%-ով, ընդ որում Երևանում՝ 71.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 74.1%-ով: Գործարքների քանակը 2008թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 82.8%-ով, ընդ որում Երևանում՝ 80.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 86.1%-ով:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 3835.61 հա մակերեսով հողեր, որից 23.90 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 97.7% կամ 3747.18 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.10 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2987.61 հա, որից 2985.12 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 19 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.04%: 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 45.2%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 55.8%-ով: 2009թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում՝ 39.1%:

2009թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 11558 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 18.3%-ով, իսկ 2008թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 8.6%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.4%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն